«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Գասպարյան

Ուսումնական հաստատություն՝Խաչատուր Աբովյանի անվան հ. 84 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք 3

Ներածություն 4

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում6

Ինչի՞ մասին ես ուզում սովորել 6

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը 8

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին 13

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ.....17

Հետազոտական աշխատանք

Թեմա- Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ինչո՞վ է տարբերվում մեր էպոսը, ինչո՞վ է յուրահատուկ:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Հայկական էպոսում ինչպե՞ս են արտացոլվել հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային գաղափարները, ի՞նչ կերպով են արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրները, որոնց ուսումնասիրությունն արդիական է ժամանակակից քաղաքակրթական շարժընթացների համատեքստում:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Էպոսում արտացոլված են ազգային ինքնության արքետիպային գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման և հաղթահարման համար: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ազգային արժեքների ձևավորման ու պահպանման գործում փաստելով ազգային ինքնության արդիականացման և նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը:

Խաչվող հասկացությունները՝

- Ժամանակ և տարածություն
- Հայրենասիրական և աժեքային համակարգ
- Ազատ և արդար կյանք:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Պատմություն
2. Հասարակագիտություն
3. Հայ գրականություն

Ներածություն

Հետազոտության կարևորությունը: Ազգային էպոսներն ամեն ժողովրդի երազանքներն արտահայտող գրական հուշարձաններ են, որոնք ուղեկցում են ազգի հետագա ընթացքին՝ հիշեցնելով, թե ինչ է դնում հայրենիք սրբազան հասկացության մեջ տվյալ ժողովուրդը: Ըստ օտարազգի էպոսագետների՝ «Սասունցի Դավիթը» աշխարհի լավագույն էպոսներից մեկն է, իսկ ըստ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի, որը 1964-ին թարգմանել ու հրատարակել է էպոսը ֆրանսերենով, իր խաղաղասիրական ու դեմոկրատական գաղափարախոսությամբ հայկական ազգային էպոսն անզուգական է:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը թարգմանված է աշխարհի շատ լեզուներով և ունի միջազգային տարածում: Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին, ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

Այս բարձր հայրենասիրությունն ու համամարդկային գաղափարները գեղարվեստական անթերի դրսևորմամբ ժողովուրդը ստեղծել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ կապարյա ծանրությամբ տիրապետում էր ֆեոդալական-եկեղեցական աշխարհայեցողությունը, երբ իշխող դասերի արտահայտիչները քարոզում էին հնազանդվել տերերին, համակերպվել դաժան իրականությանը, երբ ժողովրդի հայացքը իրականությունից շեղելու համար նրան կերակրում էին հանդերձյալ կյանքի, երկնային արքայության ստահոդ խոստումներով: Հակադրվելով ժամանակի տիրող մտայնությանը՝ ժողովուրդը առաջ էր քաշում պայքարի միջոցով ազատ ու երջանիկ կյանք ստեղծելու տեսակետը, մարդուն ամուր կապում երկրային կյանքին, լիցքավորում իրականության շահախնդրություններով: Էպոսը զարգացնում է ժողովուրդների իրավահավասարության ու բարեկամության, կնոջ ու տղամարդու հավասարության, ազնիվ ու ստեղծագործ աշխատանքի, ազատության ու սոցիալական հավասարության գաղափարները: Հենց այդ գաղափարներով էլ «Սասունցի Դավիթ» էպոսն անմահ է և այսօր էլ ծառայում է առաջադեմ մարդկությանը սոցիալական ու քաղաքական ազատագրութ-յան համար մղվող նրա պայքարում:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի յուրացումը պարտադիր է ոչ միայն կրտսեր դպրոցի աշակերտների, այլև ավագ դպրոցի աշակերտների համար, որովհետև դրանք բոլորը պատրաստում են ապագա ուսուցչին, որն իր ազգային

մտածողությամբ ու համամարդկային ընկալումներով առաջադեմ լինելու պարտավորվածությունն ունի:

Թեմայի հետազոտության նպատակը: Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել էպոսի դերը հայրենասիրության և ազգային ինքնության ձևավորման գործում: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ⇒ ուսումնասիրել էպոսը որպես ժամանակակից սերնդի բարոյական դաստիարակության գործոն,
- ⇒ ներկայացնել էպոսի դերը արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում,
- ⇒ վեր հանել էպոսի կերպարների միջոցով արտացոլված հայրենասիրական և ազգային արժեհամակարգը բնութագրող գաղափարները և պատումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում հետազոտության մեջ ուսումնասիրության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Արդի մանկավարժական պրակտիկայում ուրույն տեղ ունի ազգային ավանդույթներով իրականացվող դաստիարակությունը: Հայ ժողովուրդը պատմական զարգացման ճանապարհին մշակել և արմատավորել է իրեն բնորոշ սովորույթներ, առօրյա կյանքի, կանոններ, կենցաղավարության նորմեր, որոնք, փոխանցվելով սերնդեսերունդ, դարձել են ազգային ավանդույթ և օգտագործվում են որպես նոր սերնդի դաստիարակության կարևորագույն միջոց:

Երեխայի դաստիարակության գործընթացում կարևոր է հաշվի առնել ազգային ավանդույթները, սովորույթները, բարքերը, ժողովրդական կենցաղը, ինչպես նաև տեղ հատկացնել ազգային առաջադիմական ավանդույթներին: «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները:

Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ»[1]: Ազգային ավանդույթների պահպանումը և կիրառումը կարող են մեծապես նպաստել աճող սերնդի դաստիարակությանը, ինչը պահանջում է ավանդույթների հանդեպ ստեղծագործական մոտեցում, անցյալի մշակութային արժեքների խոր իմացություն, դրանց արդիականության նուրբ զգացողություն:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

Հարկ է նկատի ունենալ, որ ոչ բոլոր ավանդույթներն են պահպանել դաստիարակչական նշանակությունը: Խնդիրն այն է, որ ազգային ավանդույթներում տեղ են գտել նաև արդեն իսկ ժամանակավրեպ դարձած և նույնիսկ հետադիմական գաղափարներ ու մտայնություններ: Եթե դրական բովանդակությամբ ավանդույթները դաստիարակության կարևոր գործոն են և նպաստում են հասարակության առաջընթացին, հետադիմական ավանդույթները, ընդհակառակը, խոչընդոտում են առաջընթացը, հետևաբար դաստիարակչական աշխատանքը պետք է կազմակերպել այնպիսի ձևերով ու մեթոդներով, որ կենցաղում և հասարակական հարաբերություններում դեռևս պահպանվող վնասակար սովորույթներն ու ավանդույթները հնարավորինս բացառվեն ուսումնական գործընթացից:

[1] Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 38

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոխվում են. որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին տասնամյակներ առաջ, այսօր այլևս էական արժեք չեն ներկայացնում: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով: Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, ապագա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են. այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինքնուրույնություն և այլն:

Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է» [2]:

Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն: Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոց են ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Որպես մանկավարժական արժեքներ՝ դրանք մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Օրինակ՝ ժողովրդական բա- նահյուսության մեջ մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու գաղափարները հանգում են նրան, որ ֆիզիկական աշխատանքը մարդու ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքն է և անհրաժեշտ գործոնը: «Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված են

[2] Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, էջ 132

ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը և գեղագիտական ընկալումները:

Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես բոլոր ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով»[3]: Ժողովրդական բանահյուսությունը վկայում է, որ հայ ժողովրդին միշտ հատուկ է եղել բացառիկ աշխատասիրությունը, որով էլ պետք է դաստիարակվի երեխան: Ժողովրդական տոների և խաղերի մանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետությամբ են գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները:

Այս առումով ժամանակակից սերնդի բարոյական դաստիարակության համար խիստ կարևոր է կրթական գործընթացում ժողովրդական էպոսի լիարժեք կիրառությունը: «Սասնա ծռեր» դյուցազնավեպը համամարդկային գաղափարներ արծարծող լայնակտավ էպիկական ստեղծագործություն է, որի պատմական, գեղարվեստական նշանակությունն անվիճելի է: Նույնքան անվիճելի է հայոց հանճարի այս բանավոր արտահայտության մանկավարժական արժեքը. էպոսը դաստիարակության յուրօրինակ հանրագիտարան է, որից բարոյապես մաքուր ապրելու դասեր են քաղել բազում սերունդներ:

Որպես դաստիարակչական յուրօրինակ մեթոդական ուղեցույց օգտագործելով էպոսը՝ մենք դառնում ենք նրա գաղափարների ոչ միայն կրողը, այլ պարտավորված տարածողը: Եվ այս կարևոր առաքելությունն իրականացնողը ոչ միայն գրականության ուսուցիչն է, այլ ողջ դատիարակչական համակարգը:

Դպրոցի խնդիրն է՝ ցույց տալ Սասնա ծռերի բարոյական հատկանիշները՝ բացահայտ և միջնորդավորված: Երկու դեպքում էլ ազգային դաստիարակության հարցի լուծմանն է նպաստում:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Մարդը համարվում է ամեն ինչին, սակայն երբ հարմարվում է վատին, նրան վերափոխելը շատ դժվար է: Մանկության տարիներից երեխաներին պետք է ընտելացնել կատարյալին, բարուն, ազնիվին և վեհին, այլապես հետո ուշ կլինի:

«Դաստիարակող իրադրությունը կյանքի իրադրությանն այնպիսի ուղղություն տալն է, որի ընթացքում հանգամանքները պարտադրում են, և արդյունքում ձևավորվում են անհրաժեշտ հմտություններ, սովորույթներ կամ համոզմունքներ:

Ամենակարևոր բարոյական սկզբունքը, որը մեր էպոսի գաղափարական հիմքն է, նրա միջուկը, հայրենասիրությունն է: Գարեգին Նժդեհնը կոչ էր անում դիմել «մեծ

[3] Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, էջ 64

մեռելներին»: Հայրենասիրական դաստիարակության հարցում մեծ տեղ պետք է հատկացնել գեղարվեստական գրականությանն ու պատմությանը:

Մեծագույն մարդկանց գաղափարներն ու կյանքի ուսումնասիրությունը, նրանց օրինակով աճող սերնդին դաստիարակելը հզոր միջոց է: Հայրենասիրությունը պետք է սնվի ժողովրդական ակունքներից, ժողովրդական ավանդություններից: «Չի կարող լինել իսկական հայրենասիրություն առանց ազգային դաստիարակության, որը պետք է ոչ միայն նկատելի լինի ինքնըստինքյան,այլև միախառնվի մարդու բոլոր բնութագրական գծերին և հաղորդի առանձնահատուկ երանգավորում»[4]:

Հայրենասիրության գաղափարը էպոսի միջոցով պատանիներին հասանելի դարձնելը շատ կաևոր է: Այստեղ հայրենասիրությունը համազգային և համամարդկային բնույթ ունի: Էպոսում ժողովրդի ցասումն ամենից առաջ ուղղված է արտաքին բռնակալության դեմ: Բայց, իհարկե, սխալ կլինի կարծել, որ Սասնա հերոսների օրինակով հայրենասիրությունը, համազգային ընդգրկում ձեռք բերելով, ստվերում է երկրի ներսում եղած հակասությունները: Ինչպես էպոսում է արտաքին մարտահրավերին դիմակայելը հիմնական համարվում, այնպես էլ՝ ժամանակակից կյանքում: Ապրիլյան պատերազմի հերոսներին համեմատելով էպոսի հերոսների հետ՝ հայրենասիրական որակներով և նաև ներքին հակասությունները ժամանակավոր մի կողմ դնելու առումով՝ փաստում ենք, որ նրանք նույն արյան կանչն ունեն: Էպոսում հայրենասիրությունը համազգային է, քանի որ թշնամին գալիս է ոչ միայն շահագործելու, հարկ տանելու, այլև ոչնչացնելու ժողովրդին, կործանելու երկիրն այնպես, որ «Ալ Սասուն անուն չեղնի աշխարքի մեջ», մի հանգամանք, որ ստիպել է «սաղ Սասունը» ոտքի հանելու, իր էությամբ ներքին կռիվը վերլուծելու համազգային պատերազմի: Այսօր էլ էպոսի հայրենասիրական ձևն ու դրսևորումը արդիական է: Ոչ գերբնական է, ոչ էլ չափազանցված: Այսօր էլ աշխատավոր ժողովուրդն է հայրենասիրության կրողը, էպոսում էլ նույնն է:

«Սասնա ծռեր» էպոսը ձեւավորվել է VIII-X դարերում տեղի ունեցած պատմական մեծ իրադարձությունների ընթացքում՝ որպես արաբ զավթիչների դեմ հայության մղած տեւական պայքարի եւ նվաճված անկախության գեղարվեստական արտահայտություն: Էպոսն արտացոլում է հայ ժողովրդի հավաքական մտածողությունը, նրա կենսասիրությունն ու բարոյական ըմբռնումները, եւ, որ ամենակարեւորն է, ազատասիրական ոգին:

Դյուցազներգությունը բաղկացած է չորս ճյուղից՝ «Սանասար եւ Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»: Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառը հայերենում նշանակում է դիվահար, խենթավուն, խելահեղ, քաջ, և

[4] Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 133

իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում: Էպոսն անվանում են նաև «Ջոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն», «Հսկաների տուն», «Քաջաց տուն»: Այդ քաջաց տոհմին պատկանող կանանցից է սերվում հերոսների երեք կրտսեր սերունդ:

«Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերից ամենանշանավորը եւ հայ ժողովրդին ամենահոգեհարազատը «Սասունցի Դավիթ» ճյուղն է: Այստեղ հայ ժողովուրդը նզովում է նենգ իշխաններին, և փառաբանում հայրենասեր, ուժեղ, քաջ հերոս Դավթին:

Հայկական էպոսում զարմացնում է իրենց երկրի պաշտպանության նկատմամբ սասունցիների դրսևորած անհոգ վերաբերմունքը: Այսպես, Սասունը շրջապատված է թշնամիներով, սակայն չունի ո՛չ զորք, ո՛չ զորավարներ, ո՛չ էլ պաշտպանական կառույցներ, ո՛չ էլ լրջմիտ մարդիկ, ովքեր դրանց մասին կմտածեն: Հերոսները գալիսգնում են, սակայն չի փոխվում Սասունի կարգավիճակը. Սասունը մնում է որպես հարկատու երկիր, որովհետև չունի ո՛չ անկախ իշխանություն, ո՛չ բանակ, ո՛չ էլ հզորանալու գաղափար:

Ներողամտությունը, հանդուրժողականությունը, թշնամուն չատելու անկարողությունը դժբախտաբար ուղեկցվում է իշխելու, նվաճելու, տիրելու կամքի բացակայությամբ: Այսինքն՝ հայն իր պատմության ընթացքում չի ցուցաբերել, չնչին բացառություններով, ուրիշներին իշխելու, կառավարելու, ուրիշներին ենթարկեցնելու ո՛չ կամք, ո՛չ ջանք, ո՛չ էլ ցանկություն: Դա տեսնում ենք նաև հայկական էպոսի հերոսների կերպարներում: Նրանք փառամոլ չեն, բայց նաև իշխանատենչ ու իշխանություն սիրող չեն: Սանասարն ու Բաղդասարը, խալիֆի դատաստանը տեսնելով և նրա զորքը թրի տակով անցկացնելուց հետո, փոխանակ տիրանան այդ ընդարձակ թագավորությանը, թողնում-հեռանում են այդ երկրից: Նրանք մերժում են նաև իրենց պապի՝ Գագիկ թագավորի խնդրանքը, ժառանգելու իր թագավորությունը: Մեծ Միհրը չի ընդունում այրիացած Իսմիլ խաթունի առաջարկը՝ բազմելու Մըսրի թագավորության գահին: Դավիթը սպանում է Մելիքին և, ըստ կյանքի օրենքի, հաղթողի իրավունքով պետք է տիրանա նրա երկրին, հավաքի տուրքեր, Մըսրը դարձնի հարկատու, ավարով, գանձերով ու ստրուկներով լցնի Սասունը և այլն[5]: Մինչդեռ սասունցիները Մըսրից բերում են ընդամենը զույգ եզ և Մելիքի ականջը: Դավիթը մեծահոգաբար պարտված զորքին հրամայում է տուն գնալ և խորհուրդ տալիս էլ երբեք չհարձակվել Սասունի վրա: Գնացեք ձեր տները, ասում է նա, և մեզ հանգիստ թողեք, մեզ ոչինչ պետք չէ ձեզանից: Նույն կերպ է վարվում Փոքր Միհրը. օտար երկրում հերթական հաղթանակից հետո նրան առաջարկում են լինել տիրակալ, բայց նա համեստաբար մերժում է՝ Ես ձենե բան

[5]Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Եր., 1982, էջ 169

չեմ ուզի, Ո՛չ թագավոր կ՛ընեմ: Ո՛չ քաղքի տեր կ՛ընեմ: Ես Դավթի տղա Մհե՛րն եմ, Ես չեմ կարնա էստեղ նստի…(էջ 410):

Իշխանատենչության բացակայությամբ պետք է բացատրել այն, որ էպոսի հերոսներն ամուսնանում են թագուհիների հետ, բայց այդպես էլ ո՛չ իրենք են թագավոր դառնում, ո՛չ էլ թագուհիներն են պահպանում իրենց նախկին կարգավիճակը: Էպոսի հերոսները մի կողմից չեն ուզում տիրանալ ուրիշների թագավորությանը, ուզում են, որ յուրաքանչյուր ժողովուրդ ապրի ինքն իր համար, լինի իր գլխի տերը, մյուս կողմից՝ չեն մտածում Սասունի ինքնիշխանության ամրապնդման, անկախ պետության ստեղծման ու կայացման մասին: Սասունցի Դավիթն իր ցեղակից համակերպված-հարմարվածների[6] երազների հերոսն է, մի դյուցազն, ով կարող է թշնամուն վռնդել երկրից, ապահովել Սասունի անկախությունն ու անվտանգությունը[7]: Բայց նրանք կարծես թե վախենում են իրենց երազից, սարսափում գերբնական ուժով օժտված հերոսի հետ իրական կյանքում հանդիպելուց:

Պատահական չէ, որ համակերպվածները ոչ թե հենց սկզբից աջակցում, սնուցում ու փայփայում, հետո մեծարում ու փառաբանում են հերոսին, տվյալ դեպքում Դավթին, այլ՝

ա) ծննդյան օրվանից գրեթե հրաժարվում են Դավթից՝ նրան ուղարկելով Մըսր, վստահ Իսմիլ խաթունի գթասրտության ու մայրական բնազդի, Մհերից մնացած սիրո վրա. նույնիսկ ալարում են նրան ուղեկցել՝ հույսը դնելով Քուռկիկ Ջալալու իմաստնության վրա,

բ) չտեսնելու են տալիս Դավթի անսովոր ուժը, ըմբոստ ոգին, թշնամու թրի տակով չանցնելը,

գ) փոխանակ փնտրելու նրա ուժը օգտագործելու ուղիներ, փորձում են նրանից ազատվելու հնարներ գտնել, նրան շեղել իր բնական ճանապարհից,

դ) Դավթից թաքցնում են հոր գերեզմանի, նրա կառուցած վանքի, հայրական զենք ու զրահի տեղը, առհասարակ չեն զբաղվում նրա դաստիարակությամբ ու կրթությամբ, չեն ծանոթացնում ազգային ավանդույթներին ու արժեքներին,

ե) չեն ուզում, որ Դավիթն իմանա Սասուն ժամանած Մըսրա Մելիքի հարկահավաքների, այ նուհետև՝ նրա ջարդարար զորքի մասին, այսինքն՝ գերադասում են վճարել յոթ տարվա ծանր հարկերը, քան կռվով ձեռք բերել անկախություն:

Բարեբախտաբար, ժառանգական հատկությունների և ազգային հիշողությունը կրող-պահպանողների (խորհրդանշանը՝ պառավը, Դավթին ժամանակին ուղղություն

---

[6] Դա մարդկանց այն տեսակն է, որոնք «ուրախ են «ծառայել» երկրին, քանի դեռ նրան վտանգ չի սպառնում: Հենց որ մի բան է պատահում, նրանք ետ են քաշվում: Եվ դարձյալ նրանք ջրի երես են ելնում, դառնում են առաջինները, երբ վտանգն անցած է լինում, երբ հերոսներն արդեն պետք չեն:

[7] Մկրտչյան Լ., Հայ ժողովրդի հերոսական էպոսը, Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ 40

տվողը) շնորհիվ Դավիթը կարողանում է տեր կանգնել հայրական ժառանգությանը և կատարել թշնամուց երկիրն ազատելու իր առաքելությունը: Նկատենք, որ էպոսի հերոսները հիմնականում միայնակ են կռվում թշնամու դեմ, ընդ որում, առանց խորհրդակցելու երկրի տերերի հետ, առանց ներգրավելու ժողովրդին, առանց զորք կազմելու:

Այս խզվածության, ինչպես նաև հայրենական իշխանության ու երկրի հանդեպ սասունցիների անտարբերության ու անհոգության արդյունքն այն է լինում, որ կարևոր հաղթանակներից հետո հերոսները կարծես թե ավելորդ են դառնում երկրի ու ժողովրդի համար: Էպոսի հերոսները փոխանակ ներգրավվելու երկրի շենացման, բարեկարգման ու սոցիալական կյանքի բարեփոխման, ուժեղ պետության կառուցման գործում, անիմաստ պատրվակներով երկար ժամանակով հեռանում են երկրից՝ անտեր ու անպաշտպան թողնելով Սասնա բնակիչներին: Այսպես, Մեծ Միհրը յոթ տարի մնում է Մըսրում՝ ջրելով «խալխի արտը», Դավիթը յոթ տարի շրջագայում է Գյուրջիստանում՝ քառասուն փահլևանների համար հարսնացու փնտրելու նպատակով, Փոքր Միհրը, տուն ու կնիկ թողած, տարիներով թափառում է երկրից երկիր, կռվում ուրիշների համար, մինչև որ հողն էլ է հոգնում նրան պահելուց: Այս «փախուստ-թափառումների», աստանդական կենսակերպի տրամաբանական վախճանակետն է դառնում իբր աշխարհում տիրող անարդարությունից հուսահատված[8], իրականում իր ապրելակերպից ձանձրացած ու հասարակության, հարազատների համար ավելորդ դարձած Փոքր Միհրի փակվելը Ագռավաքարում՝ որպես երկիրը լքելու և համարյա այլևս չվերադառնալու (վերադառնալու պայմանները գրեթե անիրականանելի են), որպես պատասխանատվությունից խուսափողի խորհրդանշան, որպես գաղթականի ու հայրենալքողի նախատիպ (ո՞վ պիտի երկիրը վերափոխի, ո՞վ պիտի կռվի չարիքի դեմ, եթե Քարանձավը դառնում է Սպասավայր)[9]:

Ազգային սրբություններն ու զորությունները թաքցնելու հոգեբանական (պաշտպանական) մեխանիզմը բնավ չի նպաստում ինքնության տարրերի վերարտադրության ու դրանց՝ կենսաէներգիայով լիցքավորմանը: Ինքնությունը որպես կառույց ենթակա է սոցիալական մեխանիզմների միջոցով մշտական վերարտադրության ու վերափոխության, իսկ դա արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե այդ գործընթացների հիմքում ընկած ազգային ինքնության բաղկացուցիչները՝ արժեհամակարգը, հոգեկերտվածքը, լեզուն ու կրոնը, ցեղային հիշողությունը, խորհրդանշանները, ծեսերը և այլք, գտնվեն շարժման մեջ, պայմանավորեն էթնոկիրների առօրյա վարքը, դառնան ներքին խոսույթների

[8] Ոսկանյան Ա. Վ., HOMO TRICKSTER, կամ էստետիզմի ծուղակները, «Ռուբիկոն» գեղարվեստական-մշակութաբանական հանդես, թիվ 2 /7/, Եր., 2004, էջ 85
[9] Խեչոյան Լ., Միհրի դռան գիրքը, Եր., 2013, էջք 16-17

(դիսկուրսների) ու ինքնաանդրադարձումների (ինքնառեֆլեքսիաների) առարկա և դրանով իսկ թարմացվեն ու հարստանան նոր բովանդակությամբ:

Մինչդեռ էպոսի հերոսները հայրենասերներ ու ազգասերներ են ի բնե, այսինքն՝ այդ առաքինությունները ձեռք չեն բերում «քաղաքակրթական»՝ կանոնավոր կրթության ու դաստիարակության ճանապարհով: Ինչպես հաճախ հայոց պատմական կյանքում, այնպես էլ էպոսի մեջ Թշնամուն է վերապահվում սասունցիների գիտակցության որոշ շերտեր և ինքնության տարրեր «ննջից արթնացնելու» և շարժման մեջ դնելու գործառույթը: Թշնամին իր գործողություններով սասունցիներին ստիպում է մտածել իրենց երկրի մասին, հետամուտ լինել իրենց ազգային արժեքներին, դրանք դնել շրջանառության մեջ և օգտագործել ըստ անհրաժեշտության: Այն տպավորությունն է ստեղծվում, որ սասունցիները կարծես մոռացել են իրենց արժեքների մասին (խորհրդանշական է, որ էպոսում ազգային հիշողության պա- հապան պառավը եզրաբնակ է, ապրում է միայնակ, քաղաքից դուրս, բոլորից հեռու): Անգիտությունն ազգային արժեքների նկատմամբ անհոգության ու անփութության վկայությունն է: Սասնա հերոսները երկրի առաջնորդներից են, անհաղթ դյուցազուններ, սակայն անտեղյակ են երկրի կարգավիճակից, երկրի ուժի աղբյուրներից, հետևաբար՝ դրանք գործածելու ձևերից:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

Անձնական և հասարակական փոխհարաբերության հարցը նույնպես էպոսում բարոյական սկզբունքի հարց է:

Դյուցազներգությունը սկսվում է Ծովինարի հայրենասիրական վսեմ արարքով: Ժողովուրդը գերադասում է կռվել, արյուն թափել, բայց Ծովինարին չտալ կնության օտար թագավորին: Ժողովուրդը գիտակցում է իր արժանապատվությունը և ուզում է կռիվ տալ բռնության դեմ, բայց ոչ երբեք աչքերը բաց նայել, թե ինչպես է ոտնահարվում իր պատիվը: Սակայն Ծովինարը բարվոք է համարում ինքնակամ հանձնվել թշնամուն, զոհել իրեն, քան պատճառ դառնալ ազգի կործանմանը:

Մեր ազգն էսքան գնացեր, քիչ մնացեր,

Հազարավոր հոգիքներ կան.

Որ ես են կռապաշտ Սինամքարիմ թագավոր չառնիմ.

Աղեկ ա, ես թող կորուսեմ,

Ոչ թե էն հազար հզարավոր հոգիք կորուսեմ[10]*:*

Բարձր հոգեկան ուժի տեր կնոջ հոյակապ կերպար է, և մենք պետք է հաշվի առնենք այն դաստիարակության գործընթացում:

[10] Սասունցի Դավիթ, Եր., «Լույս», 1981, էջ 6

Անհատի և հասարակության շահերի օրինակ է էպոսում նաև բռնակալ Մսրա Մելիքի՝ իր հարկահան Կոզբադինին ուղարկելը Սասուն, որին պատվիրում է թալանել ողջ երկիրն ու մարդկանց, հետո ավելացնում է՝ բերել

Ու մանուկի աջ բազուկ

Ու Դավթի գլուխ [11]*:*

Սասունցիները, չցանկանալով զրկվել իրենց սիրելի, միակ պաշտպան Դավթից, վճռում են՝ լավ է, քառասուն աղջիկ «ժողվրտենք, տանք», Դավթին չզոհենք: Դավիթը սասունցի պառավից, ինչպես միշտ, այս անգամ էլ իմանալով եղելությունը, դյուցազնին վայել պատասխանում է.

Ես մե մարդ եմ, իմիկ գլուխ կը տամ,

Քառասուն կուս աղջկա նամուս չեմ իտա,

Մեկիկ գլխի փոխնակ՝ քառասուն գլուխ չեմ իտա[12]*:*

Ծովինարի սերնդին հատուկ որոշում էր սա: Ինչու չասել պատանիներին, որ իրենք էլ են Ծովինարի սերունդը: Դավիթը նույնպես անձնազոհ անհատի կերպար է:

Հումանիզմը նույնպես բարոյական սկզբունք է էպոսում, նրա հերոսները օժտված են նաև խոր մարդասիրությամբ, մարդկանց նկատմամբ սեր ու համակրանք են տածում՝ լինի սասունցի պառավը, թե Մսրա ծերունին:

Բարոյական արժեքներով ապրող մեր ժողովուրդը բանավոր ձևակերպել է նաև բարոյական այն նորմերը, որոնք ավանդույթի ուժով դաստիարակել են սերունդներ: Դրանք այսօր էլ կենսունակ և լավագույն միջոցներից են՝ դաստիարակելու նոր սերունդներին:

Կանայք յուրահատուկ դերակատարություն ունեն էպոսում: Նախ ընդգծենք, որ, ինչպես հավաստում է հայ ժողովրդի այս հանճարեղ ստեղծագործությունը, հազար և ավելի դարեր առաջ հայ հասարակության մեջ կինն ունեցել է առանձնահատուկ դերակատարություն և դիտվել է տղամարդուց ոչ պակաս էական՝ որպես հասարակության անդամ և ընտանիքի բաղկացուցիչ: Էպոսում դա ձևակերպված է հստակ և սեղմ՝ «Առյուծն առյուծ է, էգ էղնի, թե որձ»:

Այո, սասունցի կանայք հավասար են ամուսիններին իրավունքներով: Ուս ուսի տված ապրում և արարում են: Ընդունում են իրենց տղամարդկանց և միայն իրենց տղամարդկանց են «տեսնում»: Առաքինի են, արդար, ներողամիտ, եթե ազգային շահ կար (Մեծ Միերին ներելու արդյունքում ծնվեց Դավիթը): Եվ ինչու՞ ներողամտության լավագույն օրինակ Արմաղանի կերպարով չդաստիարակենք նոր սերունդներին: «Առյուծածին մայրեր», ապագա զինվորների դաստիարակներ չեն կարող դառնալ այն աղջիկները, որոնք կյանքում զորավիգ չեն եղել զինվորին:

---

[11] Սասունցի Դավիթ, Եր., «Լույս», 1981, էջ 199

[12] Սասունցի Դավիթ, Եր., «Լույս», 1981, էջ 184

Հասարակության և դպրոցի խնդիրն է ցույց տալ վերոհիշյալ և հազարավոր նման պատմությունների իրական լինելը, մեծարել հայ ազատամարտիկի հիշատակը, խոնարհվել ծանր կորստի ցավ ապրող զինվորի վեհության առաջ, մաքուր, անպաճույճ, անաղարտ հայրենասիրությունը: Այդպիսի իրական օրինակ են Սասնա ծռերը:

Սասունցի Դավթի վեհ ոգին պետք է դրվի հայ զինվորի կերպարի հիմքում:

Դարձեք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մսրա.
Բայց թե մեկ էլ զենք ու զոռով,
Վեր եք կացել մեզ վրա,
Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, որ մեզ արիք դուշման … [13]:

Անդրադառնալով «Սասնա ծռերի» կառուցվածքին և յուրաքանչյուր ճյուղի «օղորմիներին»՝ մենք պատանիների մեջ սերմանում ենք հարգանք նախնիների նկատմամբ: Թեև նրանք հեռու անցյալում են, բայց, ինչպես Թումանյանն է ասում, «գործն է անմահ», իսկ այն, որ յուրաքանչյուր արժանի նախնի «օղորմի» է ստանում, դրանով արդեն գնահատում և արժևորում ենք գործը: Արժանավորները «օղորմի» են ստանում, իսկ նրանք, որոնց գործերը միայն չար են, նույնպես արժանի են հիշատակության, բայց՝ «ոչ օղորմի նրանց»: Կարող էր իմաստուն ժողովուրդը չմտցնել նրանց այդ ցուցակում, բայց ոչ, նրանք էլ իրենց արժանի գնահատականն են ստանում այստեղ: Ոչ միայն ներկայի, այլ ապագայի համար, որովհետև կենդանի մարդու գործունեությունը նաև ապագայում է ապրում:

Այպիսով Էպոսի հերոսները՝ թե՛ կին, թե՛ տղամարդ օժտված են այնպիսի գծերով, որոնք ուսանելի են: Էպոսի ոգին հայ ժողովրդի ոգին է, իսկ այն, ինչ առնչվում է մեր հերոսների գենետիկ հիշողության հետ, պետք է նպաստել, որ հայ պատանիները նրանց օրինակով դաստիարակվեն: Մեծին հարգելու, ընտանիքի, երախտագիտության, նախնիների նկատմամբ ունեցած հարգանքի և գործի անմահության գաղափարի կրողն են, բոլոր հերոսները՝ Ծովինարը, ժողովուրդը, Սանասարը, Միերը և բելերը, որոնք ստեղծել են Սասնա ժողովրդի ոգին:

Եվ այդ ոգին այսօր անհրաժեշտ է տալ, արմատավորել և պահպանել: Աշխատանքը նպատակ է հետապնդում ինչ-որ չափով նպաստել սաների դաստիարակության գործին, ազգային դաստիարակությունն ու ազգային մտածողությունը պահպանելու գործին:

---

[13] Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 135-136

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք ասել, որ էպոսը եղել և մնում է դպրոցական կրթական ծրագրի կարևորագույն թեմա, և նրա ուսուցումը պահանջում է անհրաժեշտ հմտություն: Էպոսի ուսուցումը ներկայացնում է հայ էպոսագիտության անցած ճանապարհը, որը սկսում է 1874 թվականից՝ Գարեգին Սրվանձտյանցի առաջին գրառումից և հասնում մինչև մեր օրերը: 1939 թվականին նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման հազարամյակը, և այդ առիթով հրատարակվել է համահավաք բնագիրը, որի հիմքում ընկած են եղել Կարապետ Մելիք Օհանջանյանի հրատարակած «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումների երեք ստվարածավալ հատորները:

Ինչպես Ֆ. Ֆեյդին է հաստատում, էպոսի համահավաք բնագիրն ամբողջովին ստեղծվել է ժողովրդական պատումների հիման վրա, և նրանում հեղինակային, անհատական հետսմուտ ոչինչ չկա, ողջը հյուսվել է՝ ըստ «ժողովրդական երակի»: Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը:

«Սասունցի Դավիթ» էպոսի արվեստի ցուցիչն է նրանում գործող հերոսների խիստ անհատականացված և չմոռացվող կերպարների համակարգը: Հայ ազգային էպոսի յուրացումը պահանջում է բնագրի բարբառային բառերի իմացություն, որոնք այնքան էլ մեծ քանակ չեն կազմում, և դրանց մի մասը դեռ պահպանված է այսօրվա խոսակցական հայերենում:

Մեր էպոսում լավագույնս է արտահայտվում հայրենասիրության, խաղաղության, ընտանիքը, ծնողին սիրելու և հարգելու գաղափարները: Էպոսում մենք չենք տեսնում նվաճողական որևէ ձգտում: Չորս ճյուղի հերոսներն էլ խաղաղասեր են, կառուցող, ազգասեր, հայրենասեր: Էպոսում կարևորվում է հայրենի հողի պաշտպանությունը: Այս գաղափարների կրողներն են էպոսի հերոսները և այս գաղափարներն են, որ մեր էպոսը դարձնում են լավագույնը:

«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը: «Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 38
2. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, էջ 132
3. Խեչոյան Լ., Միերի դռան գիրքը, Եր., 2013, էջք 16-17
4. Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 133
5. Մկրտչյան Լ., Հայ ժողովրդի հերոսական էպոսը, Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ 40
6. Ոսկանյան Ա. Վ., HOMO TRICKSTER, կամ էստետիզմի ծուղակները, «Ռուբիկոն» գեղարվեստական-մշակութաբանական հանդես, թիվ 2 /7/, Եր., 2004, էջ 85
7. Սասունցի Դավիթ, Եր., «Լույս», 1981, էջ 184
8. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Եր., 1982, էջ 169